Մարտիրոսեան կը զարմանայ թէ ինչու իր տէրը չը պիտի ուզէ որ ինք ուրիշ գործակատարներու հետ յարաբերութիւն ունենայ, կը զարմանայ թէ ինչու խազէինը կը կասկածի իր վրայ։ Այն ժամանակ իր ընկերներէն մէկը իրեն կը պատմէ թէ «կան գործակատարներ, որոնք մանր ծախքերի գումարն աւելցնում են և թէ հէնց իրենք խազէիններն այդ տիպի գործակատարներից են, որոնք իրենց խարդախութիւնների չնորհիւ կարողացել են հարստութիւն դիզել»։

Մարտիրոսեան միամտութեամբ կը բողոքէ գողութեան գաղափարին դէմ։ Բայց իրեն կը պատասխանեն.

«—Մեր ստացած փողը մեզ չի բաւականացնում. մեր կարիքները շատ են. թող վճարեն մեզ մեր կարիքների համեմատ, և մենք չենք գողանալ այլևս,» ասաց անկեղծութեամբ գործակատարներից մին։

«Մարտիրոսեանն զգաց, որ նա ճշմարիտ էր ասում. երեք ամսուայ ընթացքում իւր վրայ փորձել էր այդ։ Նա չռայլ չէ, նոյնիսկ ագահ էր, բայց այդ երեք ամսում չէր կարողացել մի բուբլի յետ գցել։

«Երկար հոգեկան կռիւից յետոյ, ակամայ յաղթուեց բարոյականութիւնը, որի միջոցով նա ուզում էր 300 բուբլի պարտքը վճարել և գիւղ գնալ՝ իր սուրբ պաշտօնը չարունակելու...»

Բայց չորս տարի յետոյ Մարտիրոսեան դարձեալ Բագուի մէջ էր, 100 բուբլով մէկի մօտ հաշուապահ։ Պարտքերը վճարած էր, բայց մտքէն անդամ չէր անցներ Բագուէն հեռանալ։

Մարտիրոսեան գտեր էր «ապրելու գաղանիքը»։

Գրուածքը գեղարուեստական արժէք չունի։

ՉԱՅԷՆ

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1) Լեոն Մանուէլեան, «Նկարիչ Թաչճեան», դրամա 4 գործողութեամբ (արտատպած «Մուրճ» ամսագրից), Թիֆլիզ 1903 թ., գինն է 35 կ.

2) Վ. Փափազեան, «Վիշապ» (զրոյց), Բագու, 1903 թ., գինն է 3 կոպ.

3) «Հազար ու մի խաղ», ժողովրդական երգարան, ա. յիսնեակ, խմբագրեց Ն Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղեան, Վաղարշապատ, 1905 թ., գինն է 10 կ.

4) Գ. Մաղաքեան, «Մայր և երեխայ», Թիֆլիզ, 1003 թ., գինը է 40 կ.

5) Ե. Տ.-Յովհաննիսեան, «Մեր անդամները», Բագու, 1903 թ., գինն է 25 կ.

6) Կրօնիտէս ք. Նալբանդեան, «Բացատրութիւն ս. պատարագի արարողութեան», Կ.-Պոլիս, 1903 թ., գինն է 40 կ.

7) «Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան», մասն ա., կազմեց Հ. Յովհաննիսեան, Թիֆլիս, 1903 թ., գինն է 50 կ.

8) Վ. Լունկեվիչ, «Բնութեան երկու մեծ թագաւորութիւնները», փոխադր. Յակովբ ք. Սառիկեան, Ս.-Պետերբուրգ, 1903 թ., գինն է 30 կ.

9) Գիւ դը-Մոպասսան, «Գեղեցկուհու խոստովանութիւնը և հանգուցեալի գաղտնիքը,» թարգմ. ռուերէնից Ե. Տ.-Յովհաննիսեանց, Բագու, 1903 թ., գինն է 10 կ.

10) Հ. Համբարձումեան, «Արիւն էջեր», Թիֆլիս, 1903 թ., գինն է 15 կ.

11) Ադա Նեգրի, «Բանաստեղծութիւններ», ա. պրակ, թարգմ. Յ. Յակոբեան, Թիֆլիս, 1903 թ., գինն է 30 կ.

12) Յ. Դաղբաշեան, «Լիակատար բառարան ռուսերենից հայերէն, «И—Мурлыка», Թիֆլիս, 1903 թ.. գինն է 1 բուբլի։

13) Բրակկո, «Պատուաւորներից մէկը», փոխադր. Կ. Ջալալեան, Թիֆլիս, 1903 թ., գինն է 15 կ.

14) Г. Халатьянцъ: «Армянскіе Аршакиды въ «Исторіи Арменіи» Моисея Хоренскаго», Москва, 1903 г., цѣна 3 рубля.

15) Հ. Գ. Գալէմքեարեան, «Ոսկեդարեան և ոչ-ոսկեդարեան հայերէնի խնդիրը», Պոլիս, 1903 թ., գինն է ?

16) Դոկտոր Կ. Յ. Փաշայեան, «Երեխաների սնունդը», Այէքսանդրոպոլ, 1903 թ., գինն է 50 կ.